ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 նոյեմբերի 2012 թվականի N 467-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՄՐԳԱՇԵՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>, <<ՆԱԻՐԻԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ԵՎ <<ՆՈՐ ԳԵՂԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 2-ի N 32-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ և 7-րդ կետերի՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Մրգաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն>>, <<Նաիրիի բժշկական կենտրոն>> և <<Նոր Գեղիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար մրցույթներն անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝

1) ***Կավպենկո Շահգալդյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետ,

2) ***Կարեն Մարգարյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

3) ***Արմեն Օհանյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի օգնական,

4) ***Էլզա Հովհաննիսյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ,

5) ***Գայանե Մարտիրոսյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,

6) ***Նաիրա Մարգարյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ,

7) ***Վահագն Նազլոյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ:

2. Հանձնաժողովի նախագահ նշանակել՝ ***Կ. Շահգալդյանին***, քարտուղար՝ ***Կ. Նազլոյանին***:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ